ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ՀԱՑԱՍԷՐՆԵՐԻ ԿՈՉԸ

Եւրոպացի հռչակաւոր գործիչները դիմում են արել Ռուզվէլտին հայերի վիճակը թեթեւացնելու նպատակով։ Այդ դիմումի բովանդակութիւնն է.

«Մենք չենք կասկածում, որ դուք էլ մեզ նման խորապէս զգացուած էք, տեսնելով հայ ժողովրդի ողբալի վիճակը։ Այդ ժողովուրդը նոյնպիսի ծագում ունի, ինչպէս և մենք, ու նշանաւոր դեր է խաղացել քաղաքակրթութեան գործում դեռ հին դարերից սկսած։

Նրան այժմ հասցրել են ծայրայեղ յուսահատութեան։

Նրան կորուստ է սպառնում այն դաժանութիւններից ու բռնութիւններից, որ գործադրում են շրջապատող մահմեդական բարբարոս տարրերը անպատիժ կերպով։

Տասը տարուց աւելի է, որ դրանք աշխատում են բնաջինջ անել հային։

Հայաբնակ վայրերում ապրող կամ ճանապարհորդող եւրոպացի և ամերիկացի վկաների ցուցմունքները, դեսպանների և հիւպատոսների պաշտօնական զեկուցումները միաբերան հաստատում են մեր ասածները և ճշգրիտ ու ցնցող մանրամասնութիւններ առաջ բերում։

Հայ ազգաբնակութեան համար չը կայ այլևս ոչ կեանքի ու գոյքի, ոչ էլ կանանց, տղամարդկանց ու երեխաների պատուի ապահովութիւն։

Նրանց շարունակ սպառնում է Ասիայում սարսափ ազդող կազմակերպուած խմբերի կողմից մշտական թալան, առևանգութիւն, բռնութիւն և կոտորած։

Ահա թէ ինչու մենք դիմում ենք ձեզ, նախագահ, և խնդրում միջամտութիւն այն ձևով, ինչպէս որ դուք յարմար կը համարէք, և այն ճանապարհով, որը աւելի հեղինակաւոր կը դարձնէ քաղաքակիրթ ազգի կարծիքը այն պետութիւնների

առաջ, որոնց սահմաններում տեղի են ունենում այս վայրագ տեսարանները։

Մենք համարձակւում ենք յուսալ, որ ձեր ձայնը կը լսի Ռուսաստանի կայսրը, որը արդէն տեղեկացրել է իր մարդասիրական մտադրութիւնների մասին և ցանկութիւն է յայտնել հաստատել այդ մտադրութիւնը միջազգային համաձայնութեամբ։

Մենք խնդրում ենք ձեզանից նախաձեռնող հանդիսանաք և միւս պետութիւնների աջակցութիւնն ստանալով, տալ Օսմանեան կայսրութեան հպատակներին այն հասարակական խաղաղութիւնը և ընդհանուր կարգը, որոնց բացակայութիւնը այդ պետութեանը այնքան դժբաղդութիւններ է պատճառել և նրան վերջնական կորուստ է սպառնում»։

Ստորագրել են.

Փրանսիա—Բէրթըլօ Լէօն Բուրժուա, աբբէ Լըմիր, Ա. Բրիան, Դ. Կոշէն, Ա. Լըրուաբոլիօ, Օկտաւ Միրբօ, Ալֆրէդ Կրուազէ, Լ. Հալէվի, Կամիլ Պելլըտան, Գաստոն Դու�էրգ.

Բէլգիա—Վանտէրվիլդ, Անսէլ, Հէկտոր Դէնիս, Դէվլոն—Երէցփոխ։

Հոլլանդիա—Բորժէվիուս՝ նախկին վինիստր.

Անգլիա—Ստէդ, Սէֆէնսոն, Մորիսոն, Ադլին, Դքսուէի Բէդֆորտ։

Սորվէգիա—Բէօրնստէրն Բեօրնսոն, Նանսէն.

Դանիա—Բրանդէս, Բայեր.

Իտալիա—Ասկոլի, Բոսսի, Սէրժի պրոֆէսորները։ (Շառաջ)

ՄԱՀԳՈՅԺ

Կ. Պոլսի Բերայի թաղում դեկտեմբերի 20-ին կնքել է իւր մահկանացուն տիկին Ագապի Տէր-Ներսիսեանը, Կ. Պոլսի Հայոց Պատրիարք ամեն. Տ. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի քոյրը և յայտնի Միհրան Տէր-Ներսիսեանի ամուսինը։ Հանգուցեալը իւրովսանն միշտ մասնակցում էր ազգային—եկեղեցական գործերին, որով և մեծ մխիթարութիւն էր պատճառում իւր սրբազան եղբօրը։ Հանգուցեալի յուղարկաւորութիւնը մեծ շքով կատարուել է Բերայի Սուրբ Երրորդութեան եկեղեցում և ամփոփել Շիշլիի ազգային գերեզմանատանը տոհմային դամբարանում։

Մեր խորին ցաւակցութիւնն ենք յայտնում սրբ. Օրմանեանին իւր կրած մեծ կորուստի համար։